

#22 #

ԿՈՄՅԵՐԻՑԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ Հ 41

Գ. ԳՐԵՋԵՐ

ԳՅՈՒՂԱԿԱՆ ԿՈՄՅԵՐԻՑԱԿԱՆԻՆ  
ԿԱՊԻՏԱԼԻՍԱԿԱՆ ՑԵՐԿՐՆԵՐԻ  
ՑԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ  
ԿՅԱՆՔԻ ՈՒ ՊԱՅՔԱՐԻ ՄԱՍԻՆ

Թարգմ. ԳԱՐ. ՀԱԿՈԲՅԱՆԻ

Պետական հրատարակչություն  
Ծերծվան—1926

18 JUL 2017

№ 41. ԿՈՄՅԱՏԻՔ. ԳՐԱԴԱՐԱՆԸ № 41.

Գ. ԳՐԵՋԵՐ

ԳՅՈՒՂԱԿԱՆ ԿՈՄՅԵՐԻՏԱԿԱՆԻ  
ՎԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ՅԵՐԿԻՆԵՐԻ  
ՅԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ  
ԿՅԱՆՔԻ ՈՒ ՊԱՅՔԱՐԻ ՄԱՍԻՆ



Պետական հրատարակչություն  
Յերևան - 1926

## Ա. Ո. Ա. Զ. Ա. Բ. Ա. Ն

Այս փոքրիկ գրքույկը, վոր գրել ե գերմանացի մի կոմյերիտական, նպատակ ունի Խ. Ս. Հ. Մ. գյուղացի յերիտասարդությանը պատմել, թե կապիտալիստական յերկրներում բանվորացյուղացիական յերիտասարդությունն ինչպես ե ապրում ու պայքարում:

Գրքույկը յերիտասարդ գյուղացիներին ցույց ե տալիս, վոր վոչ միայն Խ. Ս. Հ. Մ., այլ ամբողջ աշխարհում գոյություն ունեն յերիտասարդության կոմմունիստական միություններ, վորոնք բանվոր ու գյուղացի յերիտասարդությունն իր ճնշողներից աղատագրելու համար ամեն տեղ պայքար են մղում, վորպեսզի նրանք կարողանան ապրել այնպես, ինչպես յերիտասարդությունը Խ. Ս. Հ. Մ. ե ապրում:

ՈՒԿԵՇԵՄ ԿԵՆԵԿՈՄԻ Բաղլուսվար

ԿԻՄ-Ը ՎՈՐՊԵՍ ԱՄԲՈՂՋ ԱՇԽԱՐՀԻ  
ՅԵՐԻՑԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐ.

ԿԻՄ-Ը (Կոմմունիստական Յերիտա-  
սարդության Խնտերնացիոնալ) ձգտում  
է այն բանին, վորպեսզի բոլոր յերի-  
տասարդ պլողետարներին միացնի ի-  
րենց շահագործողների ու ճնշողների  
դեմ պայքար մղելու, նաև այն բանին,  
վորպեսզի այս պայքարի մեջ զանա-  
զան յերկրների յերիտասարդ բանվոր-  
ները միմյանց նեցուկ լինեն։ Նա յե-  
րիտասարդ բանվորությանը ցուցմունք-  
ներ ե տալիս, թե վորոն ե լավագույն  
պայքար մղելու ձեզ, և սովորեցնում է,  
թե ինչպես պետք ե նվաճել լույս-  
գույն աշխատավարձ, աշխատանքի ա-  
վելի կարձ ժամանակ, արձակուրդի ի-  
րավունք և ուրիշ շատ բաներ։

Ազատազրումը պլողետարական հե-  
ղափոխության միջոցով և ձեռք բեր-



1-23539/2

վելու, հենց դրա համար ել կիՄ.ն իր  
կարեոր պարտականությունն ե համա-  
րում կոչ անել յերիտասարդության՝  
այս կռվին պատըաստվելու:

Վերջին տարիներում կիՄ.ն առան-  
ձնապես աշխատում եր, վորպեսզի ա-  
ղատագրական կովի մեջ յերիտասար-  
դության ավելի ու ավելի շատ մաս-  
սաներ քաշի ու դրանով պրոլետարա-  
կան բանակն ուժեղացնի: Նա այս աշ-  
խատանքը համերաշխ կերպով տանում  
եր կոմիտերնի հետ, վորի առաջնորդ  
Զինովյել Միջազգային Յերիտասար-  
դական 9-րդ Որվա առթիվ կիՄ.-ի մա-  
սին գըում եր.

«Մենք պարզ ասում ենք՝ կոմին-  
տերնը պարծենում ե իր լավագույն  
բանակով Միջազգային կոմմունիստա-  
կան Յերիտասարդությունով: Կոմին-  
տերնը պարծենում ե նրանով, վոր մի-  
քանի տարվա ծանր կովի ընթացքում,  
կոմինտերնի միջև ամբողջովին առած  
ու նրա միջազգային կոմմունիստական

յերիտասարդական բանակների միջի  
գեռ յերբեք վոչ մի նշանակալի տա-  
րածայնություն չի յեղել:

...Աճեք ու զարգացեք, համայն աշ-  
խարի յերիտասարդ պրոլետարներ:  
Պրոլետարական յերիտասարդության  
որն այս տարի մեր յերիտասարդ ու-  
ժերի լայն զորատեսի որը թող լինի:  
Ավելի խոր մտեք մասսաների մեջ: Յե-  
րիտասարդության ամբողջ յեռան-  
դով, կոմմունիստաների ամենայն վստա-  
հությամբ մենք խորանում ենք մաս-  
սաների մեջ: Թող չինի վոչ մի ֆաբ-  
րիկա, վոչ մի արհեստանոց, վոչ մի հանք,  
վոչ մի գործարան, ուր միջազգային  
յերիտասարդական միության հուսա-  
տու բջիջը չինի: Դյուղ զնացեք: Դյու-  
ղացիական յերիտասարդությունը մի-  
ջազգային հեղափոխության պահեստի  
րանակն ե: Տանապատիկ, հարյուրա-  
պատիկ ու հազարապատիկ ավելի մեծ  
յեռանդ քաղաքի յել զյուղի յերիտա-  
սարդությունը նվաճելու ժամանակ:

ՄԻԱՅՆ ԿԻՄ-Ն Ե ՅԵՐԻՑԱՍԱՐԴ ՊՐՈԼԵ-  
ՏԱՐԻԱԾԻ ՃԵՄԱՐԻՏ ՂԵԿԱՎԱՐԸ.

Կապիտալիստական յերկրներում մի  
ուրիշ, այսպես կոչված «Բանվոր Յե-  
րիտասարդության Սոցիալիստական  
ինտերնացիոնալ» ել գոյություն ունի,  
վորը նույնպես պնդում է, թե ամբողջ  
աշխարհի յերիտասարդ պրոլետարիա-  
տի ղեկավարը միայն ինքն է: Նրան ղե-  
կավարում են այն առաջնորդները, վո-  
րոնք պատերազմի ժամանակ գավա-  
ճանեցին պրոլետարիատին: Նրանք հե-  
ղափոխական պայքար չեն ցանկանում,  
այլ շարունակ քարոզում են կապիտա-  
լիստների, այսինքն բանվորների ու  
գյուղացիների շահագործողների հետ  
համերաշխ լինել: Նրանք ասում են,  
վոր հեղափոխությունը խելագարու-  
թյուն է ու վոճագործություն, և վոր  
առանց նրան եք կարելի յե պրոլետա-  
րիատը ձնշումից ազատագրել: Բայց  
ով կհավատա, վոր հարուստ կալվածա-  
տերերն իրենց հողը հոժարակամ աղ-

քատ գյուղացիներին կտան: Ամեն մի  
խելքը գլխին մարդ հասկանում է, վոր  
նրանց պետք ե ստիպել, վոր այդ անեն:

Ուստի նրանք, ովքեր ասում են,  
վոր հեղափոխություն հարկավոր չե և  
ուզում են ամեն բան հին կարգով  
թողնել, վոչ թե առաջնորդներ, այլ ժո-  
ղովրդի խարողներ են: Այսպես կոչված  
«Բանվոր Յերիտասարդության Սոցիա-  
լիստական ինտերնացիոնալում» ել գոր-  
ծը նույն վիճակում է: Յերիտասարդ  
պրոլետարիատի միակ և խակական ղե-  
կավարն է և կլինի կոմմունիստական  
Յերիտասարդական ինտերնացիոնալը,  
վոր կապիտալիստական յերկրներում  
յերիտասարդ պրոլետարներին ազատու-  
թյան միակ ճանապարհ ցույց տվողն է:

ՅԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ԿՈՄՄՈՒՆԻՍՏ-  
ՏԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԲՈԼՈՐ  
ՅԵՐԿՐՆԵՐՈՒՄ.

Բոլոր յերկրներում կիՄ-ը յերիտա-  
սարդության կոմմունիստական միու-  
թյունների իր սեկցիաներն ունի, վո-  
րոնք իրենց յերկրներում ղեկավարում  
են պլուտարական յերիտասարդու-  
թյան պայքարը:

Նրանցից ամենախոշորը ռուսական  
միությունն ե (Ռ. Լ. Կ. Յե. Մ.), վո-  
րը միլիոն ու կես անդամ ունի, վո-  
րոնց կեսից ավելին գյուղութիւն ե:

Կապիտալիստական յերկրներում կոմ-  
մունիստական միություններն ափելի  
քիչ են: Նրանք մոտ 120—130,000  
անդամ ունեն:

Բացի այդ, միքանի ուրիշ անլեզար  
միություններ ել գոյություն ունեն,  
այսինքն այնպիսիները, վորոնք գաղտ-

նի, առանց իրենց յերկրի կառավա-  
րության թույլտվության են աշխա-  
տում: Նրանց անուններն ու քանակը  
չի կարելի մատնանշել, վորովհետև այն  
ժամանակ կառավարությունը կսկսի  
հեղափոխական յերիտասարդ պլուտա-  
րիատին անգութ կերպով հալածել:

Կարող ե պատահել՝ դուք զարմացած  
լինեք, վոր Խ. Ս. Հ. Մ. (Խորհրդային  
Սոցիալիստական Հանրապետություն-  
ների Միություն) համեմատությամբ,  
կապիտալիստական յերկրներում յերի-  
տասարդական կոմմունիստական միու-  
թյուններն այդքան քիչ անգամ ունեն:  
Դրա պատճառները շատ շատ են: Մենք  
կթվենք միայն ամենագլխավորները:

Կապիտալիստական յերկրներում  
յերիտասարդությունը պետության  
կողմից պաշտպանություն չի գտնում,  
ինչպես Խ. Ս. Հ. Մ., այլ, ընդհակառակը,  
անգութ կերպով հալածվում ե ու շատ  
զոհեր պիտի տա: Դրա համար ել կոմ-  
յերիտմիության մեջ ամենաարի և

քաջ պրոլետարիներն են մտնում, վո-  
րոնք յերիտասարդ պրոլետարիատի  
ազատագրման համար պատրաստ են  
իրենց կյանքը զոհելու։ Ուստի մենք  
պետք ե պարծենանք, վոր այս արի  
մարտիկների մեջ արդեն շատ գյուղա-  
ցի յերիտասարդներ կան, վորոնք ի-  
րենց քաղաքացի ընկերների հետ միա-  
սին անվեհերորեն կովում են։ Նրանք  
հասակավոր բանվորների հետ միասին  
յերիտասարդ բատրակների լավագույն  
աշխատավարձի համար գործադուլներ  
են կազմակերպում, և հատկապես Գեր-  
մանիայում նրանք ոժանդակեցին ժո-  
ղովրդի վոխերիմ թշնամիներից—կալ-  
վածատերերից ու նրանց արբանյակ-  
ներից զենքը խլել և ցրել այն միու-  
թյունները, վորոնք կանխորոշված եյին  
բանվորների դեմ կովելու համար։

Կապիտալիստական յերկրներում մեր  
թվական թուլության յերկրորդ պատ-  
ճառն այն ե, վոր մինչդեռ Խ.Ս.Հ.Մ.  
յերիտասարդական մեկ միություն գո-

յություն ունի, կապիտալիստական  
յերկրներում կան յերիտասարդական  
շատ կազմակերպություններ, վորոնք  
իրոք շահագործողների կազմակերպու-  
թյուններ են։ Սակայն կապիտալիստ-  
ները կարողանում են այս միություն-  
ների մեջ բանվորների մեծ թիվ հա-  
մախմբել և այնտեղ նրանց կովի մեջ  
քաշել իրենց սեփական յեղայրների  
գեմ։ Այսպես, որինակ, գոյություն  
ունեն մի շարք քրիստոնեյական կազ-  
մակերպություններ, ուր յերիտասար-  
դությանը սովորեցնում են, թե կա-  
պիտալիստների գեմ պայքարելը մեղք  
ե, վոր աստված ուզում ե, վորպեսզի  
հարուստներ ու աղքատներ միշտ լի-  
նեն, և վոր ամեն մի քրիստոնյա պար-  
տական ե հալածել սատանայի սպասա-  
վոր կոմմունիստներին։ Անա այսպես  
են տերտերները մթագնում յերիտա-  
սարդության ուղեղն ու նրան դաս-  
տիարակում շահագործողներին պաշտ-  
պանելու համար։ Սակայն յերիտասար-

դութայն այս թշնամիների մասին մենք  
գեռ ելի կխոսենք:

Կապիտալիստական յերկըներում  
մեր միությունների փոքրաթիվ լինելու  
յերորդ պատճառն այն է, վոր այնտեղ  
յերիտասարդությունն ավելի շատ են  
շահագործում, քան Խ.Ս.Հ.Մ., այնպես  
վոր յերիտասարդական միության մեջ  
աշխատելու համար նրանց հաճախ  
վոչ ուժ ե մնում, վոչ ել ժամանակ:  
Բացի այդ, ձեռնարկուներն արդելում  
են մտնել պատանեկական կազմակեր-  
պությունների մեջ, և յեթե յերիտա-  
սարդ բանվորներն, այնուամենայնիվ,  
մանում են այնտեղ, աշխատանքից  
զրկվում են:

Չնայած այս բոլոր դժվարություն-  
ներին, կոմյերիտմիության մեջ ավե-  
լի ու ավելի մեծ թվով յերիտասարդ-  
ներ են մտնում: Յեթե միությունների  
մեջ մենք միայն հարյուր հազարներ  
ենք կազմակերպել, ապա արդեն բո-  
լոր յերկըներում միլիոնավոր բանվոր-

ներ մեր յետեից են գալիս ու պատ-  
րաստ են միատեղ պայքարին մասնա-  
կցելու: Յերիտասարդության միու-  
թյունները հոգում են նաև այն մասին,  
վորպեսզի պայքարի մեջ քաշեն գյու-  
ղի յերիտասարդ պրոետարներին, վո-  
րոնք ուրիշ յերկըներում ել բնակչու-  
թյան մեծ մասն են կազմում:

ԿՈՄՅԵՐԻՑՄԻՈՒԹՅԱՆ ՊԱՅՐԱՐՆ  
ԱՄԲՈՂՋ ԱՇԽԱՐՀԻ ԿԱՊԻՏԱԼԻՍՏ-  
ՆԵՐԻ ԴԵՄ.

Յերիտասարդ կոմմունիստները վոչ  
միայն պայքար են մղում առանձին յեր-  
կըրներում, այլև միատեղ պայքարի մեջ  
պաշտպանում են միմյանց, ըստվո-  
րում ոգնելով ավելի թույլ ընկերներին:  
Այսպես՝ նեգրերի անգութ շահագործ-  
մանը վերջ տալու և նրանց աշխատան-  
քի պայմանները լավացնելու պահանջ-  
ներով, Պաբիզի յերիտասարդ բանվոր-  
ները դուրս են գալիս Փրանսիական  
կառավարության դեմ և պաշտպանում  
են ֆրանսիական գաղութներում ան-  
գութ կերպով շահագործվող ու ճնշվող  
նեգրերին:

Յերիտասարդ կոմմունիստներն ու-  
ղում են հասնել այն բանին, վոր ամբողջ  
աշխարհում վոչվոք չշահագործվի ու

չճնշվի: Դրա համար անհրաժեշտ է,  
վոր ամբողջ աշխարհի բոլոր յերիտա-  
սարդ կոմմունիստները պայքարի մեջ  
սերտորեն կապված լինեն, վորովհետեւ  
ամբողջ աշխարհի կապիտալիստներն ել  
ըանվոր դասակարգի դեմ միատեղ են  
պայքար մղում: Այս պայքարն ամենից  
առաջ մղում ե Յերիտասարդության  
կոմմունիստական ինտերնացիոնա-  
լի Գործադիր կոմիտեն, վորը բոլոր  
միություններին հաղորդում ե, թե ինչ-  
պես պետք ե աշխատեն:

Ներկայումս յերիտասարդ կոմմու-  
նիստներն ամենից առաջ պաշտպանում  
են չինական պրոլետարիատին՝ նրա ա-  
զատագրական պայքարում ընդդեմ ան-  
դիւնական, ամերիկական, յապոնական,  
ֆրանսիական և իտալական կապիտա-  
լիստների, վորոնք ներս են խուժել  
Չինաստան և այս արդարայացել կերպով  
շահագործում: Են բանվորներին, ինչ-  
պես և պատմական հանդիպություններին: Չինաստանի  
վոր ամբողջ բնակչությունը համար յերիտա-  
սարդություններում է:

սարդության կոմմունիստական միությունները բոլոր յերկրներում գրամ են հավաքում։ Զինաստան ուղարկվող իրենց յերկրի զինվորներին նրանք բացատրում են, վոր չինացիների վրա գնդակ չպիտի արձակեն, այլ ընդհակառակը, պրոլետարների հետ միասին իրենց ընդհանուր թշնամիների դեմ պետք ե դուրս գան։ Յեվ իրենց բուն յերկրներում առաջուց ձեռք բերած փորձառության հիման վրա, նրանք չինացիներին ցույց են տալիս, թե ինչպես պետք ե յերիտասարդ բանվորներին ու գյուղացիներին պայքարի մեջ քաշեն ու նրանց միացնեն նրա համար, վորպեսզի ավելի ուժեղ լինեն։

Սակայն ամբողջ աշխարհի կոմյերատականներն ամենասերտ կերպով միանում են այն ժամանակ, յերբ կապիտալիստներն սպառնում են Խորհրդ։ Միությանը և ուզում են նրա վրա նոր հարձակում սկսել։ Խորհրդային Միու-

թյունն ամբողջ աշխարհի հեղափոխական յերիտասարդ բանվորների ու գյուղացիների ամենաթանգարին ու մոտիկ յերկիրն ե. նրանք գիտեն, վոր այստեղ բանվորներն արդեն նվաճել են ազատությունը, վորին համաշխարհային պրոլետարիատը նոր պիտի հասնի։ Ուստի նրանք միշտ պատրաստ են իրենց կյանքի գնով պաշտպանելու Խորհրդային Միությունը։ Կապիտալիստական պետությունները Խորհրդային Միության դեմ վաղուց արդեն պատերազմ սկսած կլինեյին, յեթե նրանք չվախենային, վոր հենց իրենց իսկ յերկրի բանվորները ուսւների հետ միասին իրենց դեմ դուրս կգան։ Խորհրդային ազատ Միությունը կապիտալիստների աչքի փուշն ե. բայց ամեն մի Միջազգային Յերիտասարդական Որ, ինչպես և ամենորյա պայքարում յերիտասարդ ու հասակավոր բանվորները կապիտալիստներին ասում են. «Բանվորա-գյուղացիներին Միու-

թյան դեմ մենք պատերազմ չենք թույլ  
տա: Ավելի շուտ դենքը ձեր դեմ  
կդարձնենք»:

Պրոլետարիատի համաշխարհ հային  
պայքարի մեջ ինչպես յերիտասարդ,  
այնպես ել հասակավոր բանվորները  
հանձինս կոմմունիստական ինտերնա-  
ցիոնալի իրենց առաջնորդն ունեն,  
Յեզ բանվորացյուղացիական այս մի-  
լիոնանոց բանակի բարձրագույն պար-  
տականությունը հետևյալ լոգունքն ե.—

Յերիտասարդ և հասակավոր պրոլե-  
տարներ ու բոլոր յերկրների ճնշված-  
ներ, միացե՛ք:

ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ՅԵՐԻՏԱՍԱՐԴՈՒ-  
ԹՅՈՒՆՆ ՈՒ ԿԻՄ. Ը.

Գյուղացիական աշխատավոր յերի-  
տասարդությունն իր գրությունը բար-  
վորելու և իր ազատության պայքարի  
համար նախորդ տասնամյակներում  
գրեթե վոչ մի տեղ իր մարտական կազ-  
մակերպությունները չի ունեցել: Մենք  
պետք ե ասենք, վոր դեռ այժմ ել  
չքավոր ու բատրակ յերիտասարդու-  
թյունն ավելի վատ ե կազմակերպված,  
քան քաղաքի բանվոր յերիտասարդու-  
թյունը, չնայած վոր շատ յերկրներում  
գյուղացիական յերիտասարդությունը  
թվով ավելի ուժեղ ե, քան քաղաքի  
պրոլետարիատը: Այս բացատրվում ե  
նրանով, վոր գյուղացիական յերիտա-  
սարդությունն ավելի յե ցիրուցան  
ապրում, քան քաղաքինը. զանազան  
անտեսատերերի, հարուստ գյուղացինե-

րի ու կալվածատերերի մոտ նա մեռնակ կամ միքանի ընկերով և աշխատում։ Ուստի գյուղական յերիտասարդ պրոլետարիատն այնքան ել հեշտ չի կարող հավաքվել և իր դրության մասին խորհել. նա ավելի մեծ չափով յենթակա յե զանազան կալվածատերերի կամայականություններին, վորոնք դպրոցով ու յեկեղեցով ոգտվում են նրա համար, վոր գյուղացիական յերիտասարդ բանվորությունը տգիտության մեջ պահեն և այդպիսով նրանց ավելի հլու հնազանդ դարձնեն։ Իսկ չքավոր յերիտասարդությունն իր փոքրիկ, հաճախ նաև գրավ գրած արտում այնքան և աշխատում, վոր իր ծանր կյանքի մասին մտածելու ժամանակ բոլորովին չի ունենում։

Սրան ավելանում եւ և այն, վոր բանվորական շարժման հին առաջնորդները (II Ինտերնացիոնալի) գյուղացիների դրության մասին առաջ յերեք հոգ չելին տանում, նրանք հայտարա-

ըում ելին, վոր գյուղացիները հիմար ներ են, վոր իրենց արդյունքների համար միշտ ել չլսված գներ են պոկում ու բանվորներին նույնպես շահագործում են։ Այդ պատճառով ել նրանք գյուղական յերիտասարդության մասին հոգ չելին տանում և իրենց կազմակերպությունների մեջ միայն քաղաքի պլոլետարքներին ելին ընդունում։ Ինարկե, այդ առաջնորդներն իրավացի չելին։ Նրանք յերիտասարդ գյուղացիների ու քաղաքի պլոլետարքների միջև յերկու քաղաքի պառակություն ելին սերմանում, այնպահակություն ելին սերմանում, այնպես վոր, ընդհանուր թշնամու դեմ պայքարելու փոխարեն, նրանք միանց թշնամու տեղ ելին դնում։

Դավաճան առաջնորդները, վորոնք այժմ աշխատում են այսպես կոչված «Յերիտասարդության Սոցիալիստական ինտերնացիոնալում», առաջվա պես գյուղացիական յերիտասարդ պլոլետարիատի վրա նայում են իբրև քաղաքի պլոլետարիատից ինչ վոր տարբեր մի

բանի վրա ու նրա մասին հոգ չեն  
տանում:

Միայն Յերիտասարդության կոմմու-  
նիստական Ինտերնացիոնալն ու նրա  
առանձին միություններն են ճանաչել,  
վոր գյուղական յերիտասարդ աշխա-  
տավորությունը նույնպես անհրաժեշտ  
է կազմակերպել, իր սեփական թշնա-  
միների դեմ պայքարելու մեջ նրան  
պաշտպանել և գրավել նրան դեպի  
ճնշման դեմ մղվող միատեղ պայքարը:

Ուստի կոմյերիտմիությունն ինչպես  
Խորհրդային Միության մեջ, այնպես  
ել մնացած բոլոր յերկրներում, ուր  
դեռ կապիտալիստներն են իշխում, իր  
շարքերում ընդունում ենակ գյուղա-  
կան յերիտասարդությունը: Կոմյերիտ-  
միությունն աշխատում են ամենուրեք  
իր շարքերի մեջ քաշել գլխավորապես  
գյուղական յերիտասարդության ամե-  
նաչքավոր խավերին, բատրակներին ու  
չքավոր գյուղացիների յերեխաներին,  
վորովհետև ինչպես յերիտասարդ, այն-

պես ել հասակավոր կոմմունիստներն  
ամէնից առաջ առանձնապես ձնշվող  
աշխատավորների մասին են հոգ տա-  
նում:

Բացի կապիտալիստական յերկրների  
գյուղացիներից, բուրժուազիայի կող-  
մից ձնշվում են նաև գաղութային  
ժողովուրդները, վորոնք դարձյալ զբլ-  
խավորապես գյուղացիներ են: Ուստի  
ԿիՄ-ը վոչ միայն կապիտալիստական  
յերկրների գյուղական յերիտասարդու-  
թյունն են կազմակերպում, այլև Աֆրի-  
կայում, Հնդկաստանում, Մարոկկոյում  
ու Չինաստանում նույնպես արդեն  
գոյություն ունեն յերիտասարդ պրո-  
լետարիատի մարտական կազմակեր-  
պություններ, վորոնք ԿիՄ-ին են հա-  
րում:

Աշխարհի զանազան մասերի բոլոր  
այս գյուղացիներն իրենց ազատագրու-  
թյան համար այժմ պայքար են մղում,  
բայց վերջնական ազատազրման նրանք  
միայն այն ժամանակ կհասնեն, յերբ

պլուլետարիատը բոլոր շահագործողներին հաղթի ու սատանայի բաժին դարձընի:

Այս պայքարի մասին Լենինը գրել է.  
 « . . . Միայն կոմմունիստական կուսակցության կողմից ղեկավարվող քաղաքի և արդյունաբերական պլուլետարիատը կարող ե ազատազրել գյուղի աշխատավորներին կապիտալի ու կարգածատիրոջ լծից և փրկել նրանց քայքայումից ու կապիտալիստական սիստեմի գոյության ժամանակ իմպերիալիստական անխուսափելի պատերազմներից։ Գյուղի աշխատավոր մասսաներն իրենց փրկությունը կարող են գտնել կոմմունիստական պլուլետարիատի հետ ունեցած միության մեջ ու յունկերների (խոշոր կալվածատերերի) և բուրժուաների լուծը թոթափելու համար նրա հեղափոխական պայքարին կատարելապես պաշտպանություն ցույց տալու մեջ»։

Ուստի կոմյերիամիությունն ավե-

լի ու ավելի յեռանդուն կերպով ե ձգտում կապիտալիստական յերկրներում գյուղացիական յերիտասարդությունն ասպարեզ քաշելուն, վորպես զի հետո միացյալ ուժերով պայքար սկսի։ Քաղաքի յերիտասարդությունը գիտե, վոր յեթե գյուղի յերիտասարդությունն իր անելիքը հասկանա, քաղաքի պլուլետարիատի հավատարիմ դաշնակիցը կլինի, և վոր գյուղացիության հետ միասին պայքարելը կթեթևացնի վերջնական հաղթանակը»։

Քաղաքի պլուլետարիատը գյուղի սլուլետարիատին նայում ե իբրև իրեն հավասար իրավունքներ ունեցող դաշնակցի։ Նա կապիտալիստների պես չի վարվում, վորոնք հաճախ փորձում են գյուղացիներին սխալ ներկայացնել նրանց կակական շահերն ու բանվոր դասակարգի դեմ մղվող պայքարում ոգտագործել նրանց, վորպեսզի այնուհետև չքավոր գյուղացիությունը կըրկնակի կողոպտեն։

Պլոլետարները ձգտում են, վորպես-  
զի բանվորներն ու գյուղացիներն իշ-  
խանությունը միասին իրենց ձեռքն  
առնեն ու պլոլետարիատի դիկտատու-  
րայի միջոցով տապալեն բանվորների  
և գյուղացիների բոլոր թշնամիներին:

Այս բոլորի համար կոմմունիստները  
մենակ թղթի վրա չե, վոր գրում են.  
արևմտյան յերկրներում նրանք արդեն  
դործնական պայքար են սկսել: Գրե-  
թե բոլոր միություններում արդեն  
խմբակներ կան, ուր մտնում ե գյու-  
ղական յերիտասարդությունը:

Քաղաքի ընկերները պայքարում են,  
վոր բոլոր բատրակներն արհմիություն-  
ների մեջ մտնեն, և ապա նրանց հետ  
միատեղ լավագույն աշխատավարձի  
համար են պայքարում:

Գյուղական յերիտասարդ պլոլետար-  
ները քաղաքի պլոլետարների հետ միա-  
սին նաև քաղաքական ասպարիզում  
են պայքար մղում.—գյուղերում ել  
յերիտասարդ քաջ ընկերներ շատ կան:

Ուրիշ յերկրներում տեսնում ենք  
նույնը, ինչ վոր Գերմանիայում: Այս  
ցույց ե տալիս, վոր գյուղական յերի-  
տասարդությունն ավելի ու ավելի յե-  
սկում հասկանալ, վոր քաղաքի պլո-  
լետարների հետ պետք ե կովի ԿԻՄ-ի  
դրոշի տակ, յեթե ուզում ե հեղափո-  
խության միջոցով իր շահագործողնե-  
րից ազատազրվել, ինչպես Խ. Հ. Մ.  
Ժողովուրդն արեց:

ՊԱՅՔԱՐ ԳՅՈՒՂԱՅԻԱԿԱՆ ՅԵՐԻՑԱ-  
ՍԱՐԴՈՒԹՅԱՆ ԼԱՎԱԳՈՒՅՑՆ ԿՅԱՆՔԻ  
ՀԱՄԱՐ.

Կապիտալիստական յերկրներում  
գյուղական յերիտասարդության կյան-  
քը մեծ մասսամբ ավելի ծանր է, քան  
քաղաքի յերիտասարդ բանվորությանը:

Գյուղացիական յերիտասարդությու-  
նը հաճախ 16 ժամ պիտի աշխատի,  
իսկ հնձի ժամանակ՝ ել ավելի և այս աշ-  
խատանքի համար հաճախ ավելի դմսուկ  
է ուտում, քան փող ստանում: Զնա-  
յած վոր նրանց չորս կողմ ամեն ինչ  
լի ու ըոլ է, նրանք վատ և հաճախ  
նույնիսկ անբավարար են կերակրվում,  
ման են գալիս կիսամերկ և ապրում  
նեղ վորջերում, վորոնք շատ անդամ  
հավաքնից ել վատ են:

Հաճախ նրանք ամիսներով փող չեն  
ստանում, վորովհետեւ կալվածատերերը

կարծում են, վոր նրանց կերած հացն.  
ել իրենց բավական եւ: Ուստի նրանք  
իրենց համար չեն կարողանում վոչ  
հագուստ, վոչ գիրք, վոչ ել լրագիր  
գնել: Այս պատճառով ել չգիտեն, թե,  
բացի իրենց գյուղից, մնացած ամբողջ  
աշխարհում ինչ ե կատարվում: Միակ  
բանը, վոր կալվածատերը նրանց թույլ  
ե տալիս, զերմեռանդորեն յեկեղեցի  
գնալն է, իհարկե, միայն սակավ ազատ  
ժամերին, վորպեսզի այնտեղ նրանք  
տերտերից կարողանան լսել, թե աշ-  
խատանքի մեջ միշտ լսող ու յեռան-  
դուտ պետք է լինեն:

ԿիՄ-ի ծրագրում այս մասին հետե-  
վյալն ե գրած. «Գյուղացիական բան-  
վորների զրությունը հետզհետեւ վատ-  
թարանում է: Աշխատանքի ժամանակը  
շատ յերկարատեւ է, իրական աշխա-  
տավարձն լնկնում է, կյանքի մնացած  
բոլոր պայմանները վատթարանում են:  
Մանը տնտեսությունները քայլայվում  
են: Զքավոր գյուղացիության տնտե-

սական կախումը կալվածատերերից ու կապիտալիստներից ավելի ու ավելի ծանրանում ե, ծանր պարտքերը ձբդ-մում են չքավորներին, ու շատ անգամ նրանց դրությունն արդյունաբերական պրոլետարիատի դրությունից ավելի փառ ե:

Նույն այդ պատճառներից միջակ-ներն ել են տուժում: Ապրանքների թանգությունը, հարկերը, ուազմական վսամները և այլն միջակ գյուղացիությանը խանգարում են վերականգնել իրենց տնտեսությունը, վորը քայքայ-վել ե պատերազմի ժամանակ ու նրա-նից հետո: Սրան միանում ե նոր պա-տերազմների ավելի ու ավելի աճող վտանգը, վորն սպառնում ե լավագույն բանվոր ձեռքերը և աշխատանքները վոչնչացնել, գյուղացիությանը վաղվա-որվա վերաբերմամբ անվստահություն ե ներշնչում ու նույնիսկ «խաղաղ ժա-մանակ» սպառազինման համար նրանից մեծ ծախսեր պահանջում:

Եյս պատճառներից տուժում ե մա-նավանդ գյուղական աշխատավոր յե-րիտասարդությունը: Մանկական աշ-խատանքը գյուղում սոսկալի ձեռվ ե գործադրվում: Տնտեսական ծանր կա-ցությունը հարկադրում ե չքավոր ու միջակ գյուղացիությանն իրենց յերե-խաների աշխատանքն ոգտագործել: Բատրակների ու գյուղացիական յերի-տասարդության ուժերն այնպես մեծ չեն, ինչպես հասակավորներինը և ար-դյունաբերական յերիտասարդությանը:

Ուստի յերիտասարդության կոմմու-նիստական միություններն ամենու-րեք իրենց վրա յեն վերցրել գյու-ղացիական յերիտասարդ պրոլետարիա-տին ոգնելու խնդիրը՝ լավագույն կյանք նվաճելու համար: Սրա համար, իհար-կե, անհրաժեշտ ե, վոր գյուղացիական յերիտասարդությունն ինքը համախըմբ-վի և իր շահագործողների գեմ պայքար սկսի:

Սրա համար կոմյերիտմիությունը

շատ յերկրներում, որինակ՝ իտալիայում  
և Թրանսիայում կազմակերպում ե յե-  
րիտասարդ բանվորների ե գյուղացի-  
ների կոնֆերենցիաներ, ուր նրանք կա-  
րող են քննության առնել իրենց դրու-  
թյունն ու լավագույն կյանքի համարու-  
միջոցները: Այսպիսի կոնֆերենցիանե-  
րում շատ անդամ լինում են գյուղա-  
կան միքանի հարյուր յերիտասարդ  
պրոլետարներ, վորոնք իրենց գյուղերն  
են վերադառնում և այնտեղ բոլոր յե-  
րիտասարդությանը ցույց տալիս, թե  
ինչպես պետք ե կազմակերպվեն, վոր-  
պեսզի միասին պայքար մղեն լավա-  
գույն աշխատավարձի ու լավագույն  
մննդի համար:

Վոչ միայն պատանիները, այլ և աղ-  
ջիկներն են մասնակցում այդ կոնֆե-  
րենցիաներին, մասնակցում են շատ  
խորհրդակցությունների ու պայքարի:  
Հատուկ պահանջներ են մշակվում աղ-  
ջիկների համար, վորոնք ել ավելի մեծ  
չափով են շահագործվում, քան տղա-

մարդիկ: Կոմյերիտմիությունն աշխա-  
տում ե, վորպեսզի աղջիկներին ել իբրև  
մարդ ճանաչեն ու դադարեն նրանց  
վրա իբրև անսառուն կամ զվարձության  
առարկա նայելուց:

Ֆինլանդիայում, Շվեդիայում, Բոլ-  
գարիայում, Գերմանիայում, Իտալիա-  
յում, Ֆրանսիայում և ուրիշ շատ յեր-  
կրնում պատանիների և աղջիկների  
համար այսպիսի պահանջներ արգեն  
մշակված յեղել են ու կոմյերիտմիու-  
թյունը փորձել ե կյանքի մեջ կիրառել,  
չնայած վոր հարուստ գյուղացիներն  
ու կալվածատերերը շատ անդամ փոր-  
ձել են մեր ընկերներին շներով ու դա-  
գանակներով գյուղից գուրս վոնդել:  
Մեր ընկերներն իտալիայում գյու-  
ղացիական յերիտասարդության պաշտ-  
պանության համար այսպիսի անվեհեր  
պայքար են մղել (վորի համար շատերն  
սպանվել են Փաշիստների ձեռքով), վոր  
այժմ միության մեկ յերրորդը գյու-  
ղացիներից ե կազմված:

Բացի այդ, բոլոր կապիտալիստական յերկրներում կոմյերիտմիությունը գյուղական յերիտասարդության մեջ բրոցյուրներ ու թերթեր ե տարածում, ինչպես և ժողովներ ե կազմակերպում, վորպեսզի նրանց բացատրի, թե այժմ յերիտասարդությունն ինչու յե այսպես շահագործվում, և ինչպես կարելի յե նրա դրությունը բարվոքել:

ԿԻՄ-Ի ՊԱՀԱՆՁՆԵՐԸ.

Յերիտասարդության կոմմունիստական ինտերնացիոնալը հատուկ պահանջներ ե մշակել, վորի համար բոլոր յերկրների կոմյերիտականները պայքար են մղում:

1. Մինչև 16 տարեկան յերիտասարդ բանվորներն ու բանվորուհիներն որական 6 ժամից ավելի չպիտի աշխատեն, իսկ 16-ից բարձր յերիտասարդությունը՝ 8 ժամից ավելի: Այս աշխատանքի ժամանակի մեջ մտնում ե նաև նրանց կրթությունը:

10-12 տարեկան հասակի յերեխաներն այժմ առավոտյան ժամը 4.ից մինչև յերեկոյան ժամը 8.ը տավարպիտի արածեցնեն կամ հնձի ժամանակ ոգնեն... Վորպեսզի աշխատանքի ժամանակը չկորչի, կալվածատերերը, վոր հաճախ գյուղում հանդիսանում են իբրև իշխանություն և իրենց ուղածն անում, ամառը դպրոցները փակում են, այնպես վոր յերեխաներն այնուհետև չեն կարողանում սովորել:

2. Կիրակի որերը 24.ժամյա հանգիստ:

Յերիտասարդ գյուղացիներն այժմ ընդհանրապես վոչ մի ազատ որ չունեն: Անսառնների մասին նրանք կիրակի որերն ել պետք ե հոգ տանեն և հաճախ շատ ծանր աշխատանք կատարեն, այնպես վոր նրանք միքանի ազատ ժամ իսկ չունեն իրենց տրամադրության տակ:

3. Մանկական աշխատանքի, բոնի աշխատանքի և ամեն տեսակ արտաժամյա աշխատանքների վերացում:

Նույնիսկ 4—6 տարեկան յերեխաներն աշխատանքի մեջ պետք ե ոգնեն՝ արտը քաղհանելով ու այլ ծանր աշխատանք-ներ կատարելով, վոր շատ շուտ այլանդակում են նրանց մարմինն ու զանագան հիվանդությունների հասցնում:

4. Կենսական մինիմումին համապատասխան աշխատավարձ:

Յերիտասարդ բատրակներն ու բատրակունիներն ավելի քիչ են դադում, քան նրանց ապրելու համար անհրաժեշտ ե:

Կալվածատերը հաճախ այնպես ե գործում, վոր կարծեք թե հատուկ բարերարություն ե անում նրանց հագնելու լաթեր տալով:

Առանձնապես ծանր ե աղջիկների դրությունը, վորոնց կալվածատերերն ու նրանց վորդիները հաճախ ստիպում են անձնատուր լինել իրենց, վորովհետեւ հակառակ դեպքում կարող են նրանց ուղղակի փողոց շպրտել և հացից ու թեառից դրկել:

5. Միատեսակ աշխատանքի համար յերիտասարդներին ու հասակավորներին հավասար աշխատավարձ:

Չնայած կատարած միատեսակ աշխատանքին, յերիտասարդությունը միշտ ել քիչ աշխատավարձ ե ստանում, քան հասակավոր բանվորները: Ուստի հարուստ գյուղացիներն ու կալվածատերերը գլխավորապես յերիտասարդ բանվորներին են ոգտագործում, իսկ ծերերին փողոց շպրտում: Այդ հաճախ թշնամություն ե առաջացնում յերիտասարդ և հասակավոր բանվորների միջև, վորոնք, միմյանց ոգնելու փոխարեն, հաճախ իրար դեմ պայքար են մղում: Տնտեսատերերն այդ ոգտագործում են ու նրանց ել ավելի շահագործում:

6. Բանվորի կամքից անկախ առաջ յեկած աշխատանքի ընդհատման համար պետք ե վճարել:

Հնձի ժամանակ յերբ հանկարծ տեղատարափ անձրև ե սկսվում, և այդ պատճառով ստիպված են լինում աշ-

խատանքն ընդհատել, կամ թե նման  
մի բան ե պատահում, կալվածատե-  
րերը շատ անգամ հայտարարում են,  
վոր բանվորներին վճարել չեն կարող,  
վորովինետև նրանք այն ժամանակ չեն  
աշխատել։ Այսպիսով բատրակներն աշ-  
խատավարձի մի մասը կորցնում են  
ու ստիպված են պարտք անել, քանի  
վոր կերակուր չունեն ու խիստ կարի-  
քի մեջ են։

7. Հավաքական պայմանագիր արհ-  
միության միջոցով։

Կալվածատերերը շարունակ աշխա-  
տում են ամեն մի բանվորի հետ աշ-  
խատավարձի մասին առանձին համա-  
ձայնության գալ, Դրանով նրանք հաս-  
նում են այն բանին, վոր բանվորները  
համաձայնում են աշխատանքն ավելի  
եժան գնով սկսել և այդպիսով վատա-  
ցընում են մեկ-մեկու աշխատավարձ։

8. Բատրակներն ու ծառաները պետք  
ե միայն վորոշ աշխատանք կատարեն  
ու ամեն մի կարիքի համար չպետք ե

ոգտագործվեն. Նրանց բնակարանները  
պետք ե համապատասխանեն առողջա-  
պահական տարրական պայմաններին։

9. Մեքենաների նախազգուշական  
սարքավորումն ու բժշկական անհետա-  
ձգելի ոգնությունն աշխատանքատուի  
հաշվին պետք ե լինեն։

Կապիտալիստական յերկրներում  
գյուղատնտեսության մեջ հաճախ մե-  
քենաներ են կիրառվում։ Այդ մեքենա-  
ները հաճախ համապատասխան նախա-  
զգուշական սարք չեն ունենում, ուս-  
տի և դժբախտ դեպքեր են տեղի ու-  
նենում։ Կալվածատերը շատ անգամ  
նույնիսկ բժիշկ ճարելու մասին հոգ  
չի տանում և հաշմանդամ դարձածին  
ուղղակի թողնում ե գետին ընկած,  
առանց վորեւ բժշկական ոգնության։

10. Հիվանդության ժամանակ աշխա-  
տավարձը լրիվ պետք ե վճարել և հի-  
վանդի տեղը պահել։

Եերբ բանվորը հիվանդանում ե, աշ-  
խատանքատուն նրան գուրս ե անում

կամ վոչինչ չի տալիս, այնպես վոր  
հիվանդը նույնիսկ չի կարող բժշկվել:

11. Մնագամթերքների և սննդա-  
մթերքներով վճարվող աշխատավարձի  
վրա վերահսկողություն բանվորների  
վերահսկիչ հանձնաժողովների և արհ-  
միությունների միջոցով:

Մենք արդեն առաջուց ասել ենք, վոր  
չնայած պարենի ավելցուկների առ-  
կայության (հալիկո), բատրակները,  
վոր այդ բոլոր մթերքներն արտադրել  
են, նրանցից զուրկ են մնում: Նրանք  
շատ վատ են մնվում և, բացի այդ,  
նրանց հաճախ ստիպում են բնարդյու-  
նավարձ ստանալ, ըստ վորում քաշի  
մեջ նրանց խարում ու վատ ապրանք-  
ներ են տալիս:

12. Կիսամսյա վճարվող արձակուրդ  
յուրաքանչյուր 6 ամիսը մեկ:

Այժմ բատրակներն ընդհանրապես  
արձակուրդ չեն ստանում:

13. Գործազուրկ յերիտասարդու-  
թյանը նույնչափ նպաստ վճարել, վոր-  
չափ հասակավորներին:

Գյուղացիական գործազուրկ յերի-  
տասարդ բանվորները հաճախ վոչ մի  
նպաստ չեն ստանում կամ ավելի քիչ  
են ստանում, քան հասակավորները:  
Այս բանը նրանց շատ մեծ կարիքի  
առաջ ե կանգնեցնում, և կապիտալիս-  
տական յերկրներում գրեթե ամեն որ  
ինչպես քաղաքի, այնպես ել գյուղի  
առանձին յերիտասարդ բանվորներ հու-  
սահատությունից ինքնասպանություն  
են գործում:

14. Կազմակերպվելու և գործադուլ-  
ների իրավունք:

Շահագործողները գիտեն, վոր յերի-  
տասարդությունը տանջել ու շահա-  
գործել կարելի յե միայն մինչև այն  
ժամանակ, քանի դեռ ամեն մեկը միայն  
ինքն իրեն ե պաշտպանում, ու ամբողջ  
յերիտասարդությունը կազմակերպված  
դուրս չի յեկել իր շահագործողների  
դեմ: Ամենից առաջ յերիտասարդու-  
թյունը գործադուլ չպիտի անի և ինչ-  
պիսի ծանը պայմաններում ել լինի,  
պետք ե աշխատի:

Ուստի շատ յերկրներում միությունների մեջ մանելն ու գործադուլներ կազմակերպելը յերիտասարդությանն արգելված է:

Վոստիկանությունը յերիտասարդ բատրակներին հաճախ բռնի կերպով ստիպում է աշխատել կամ բանտ եռդարկում, յեթե նրանք աշխատանքից հրաժարվում են:

Կոմյերիտմիությունը կտրուկ կերպով դուրս է գալիս այդ հանցագործորենքների դեմ:

15. Ամեն տեսակ, մանավանդ մարմնական պատիժների արգելում:

ՊԱՅՔԱՐ ԱՅՍ ՊԱՀԱՆՁՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ.

Այս պահանջները կյանքի մեջ կիրառելու համար կոմյերիտմիությունն ուղիշ յերկրներում լինչ է անում: Մենք արդեն առաջուց ասել ենք, վոր կոմյերիտմիությունը գյուղացիական յերիտասարդության կոնֆերենցիաներ են:

Հրավիրում՝ նրա դրության մասին խորհելու և պահանջներ մշակելու համար: Յերբ վորեւ գյուղի ամբողջ յերիտասարդությանն իր ծանր կացության պատճառները պարզվում են, և նա պատրաստ է իր պահանջների համար պայքարել, կոմյերիտմիությունն աշխատում է այդ պահանջներն արհմիության առաջ գնել, վորպեսզի նա յերետասարդության հետ կալվածատերերին դիմի, և վորպեսզի հասակավոր բանվորները յերիտասարդության պահանջները պաշտպանեն: Սրա համար, իհարկե, անհրաժեշտ է, վոր, ըստ հնարավորության, բոլոր բատրակներն արհմիության անդամ լինեն: Ուստի կոմյերիտմիությունը ձգտում է բոլոր յերիտասարդ բատրակներին համոզել, վոր արհմիության մեջ մտնեն:

Սակայն արհմիությունները յերիտասարդության մասին հաճախ շատ քիչ են հոգ տանում: Այս ժամանակ կոմյերիտմիությունն ինքն է պայքար

սկսում: Բատրակներից մեկն ու մեկին  
կամ մի ամբողջ պատգամ ավորություն  
են ուղարկում կալվածատերերի մոտ  
ու նրանց առաջարկում, վոր յերիտա  
սարդության պահանջներն ընդունեն: Յեթե  
կալվածատերերը չեն համաձայն-  
վում, գործադուլ ե հայտարարվում:  
Գործադուլային կոմիտե յե կազմա-  
կերպվում, վորին ղեկավարում ե կոմ-  
յերիտմիությունը: Այս կոմիտեն ամ-  
բողջ գործադուլին և ամեն մի գործա-  
դուլավորի շարժումներին ուղղություն  
ե տալիս, ժողովներ ե հրավիրում, կազ-  
մակերպում ե ցույցեր և յերբեմն ել՝  
գործադուլավորներին գրամական ոժան-  
դակություն. ուրիշ վայրերի և, ամե-  
նից առաջ, հասակավոր բանվորների  
հետ կապ հաստատելու համար ուղի-  
ներ ե փնտում: Յերբեմն հաջողվում  
ե գործադուլ սկսել մի շարք մեծ շըր-  
ջաններում, և նման գործադուլները  
հաճախ հաջողությամբ են պսակվում:  
Հաճախ հասակավոր բանվորների

գործադուլներ են տեղի ունենում: Այն  
ժամանակ կոմյերիտմիությունն ազի-  
տացիա յե մղում, վորպեսզի գործա-  
դուլին յերիտասարդությունն ել մաս-  
նակից անի, վորպեսզի յերիտասարդու-  
թյան համար հատուկ պահանջներ ա-  
ռաջադրվեն, վորովհետեւ յերիտասարդ և  
հասակավոր բանվորների միատեղ յե-  
լույթով ե նրանց հաջողվում վորոշ  
հետևանքների համանել:

Իհարկե, կալվածատերերն ու հա-  
րուստ գյուղացիները կոմյերիտմիու-  
թյունն ատում են ու գործադուլների  
ժամանակ մեր ընկերներին սպանում:

Զքավոր գյուղացիության յերեխա-  
ները նույնպես լավ չեն ապրում:  
Բարձր հարկերը, փոխառությունների  
տոկոսներն ու գրավ դրած հողի պարա-  
քը գյուղացիներին ավելի ու ավելի յեն  
քայլայում, այնպես վոր նրանք գի-  
շեր ու ցերեկ աշխատում են և, չնայած  
դրան, կարիքի մեջ են: Նրանցից շա-  
տերը վերջնականապես կորցնում են

հողը, վորը պարտքի տեղ կապիտա-  
լիումն ե զավթում:

ՅԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ  
ԱԶԱՏԱԳՐՄԱՆ ՀԱՄԱՐ.

Չնայած անվեհեր պայքարին, կոմյե-  
րիտմիության առաջադրած պահանջնե-  
րը դեռ քիչ տեղերում են անցկաց-  
ված։ Այս բանը ձեզ շատ կզարմացնի,  
վորովհետև Խ. Ս. Հ. Մ. մեջ այս բո-  
լորը գրեթե իրականացվել են, կամ  
իրականացվելու վրա յեն։

Սակայն, թեկուզ հենց բոլոր պա-  
հանջներն ել իրականացած լինելին,  
կապիտալիստական յերկրներում գյու-  
ղացիական յերիտասարդության դրու-  
թյունն, այնուամենայնիվ, ելի վատ  
կլիներ, քան Խ. Ս. Հ. Մ.։ Կապի-  
տալիստական յերկրներում չքավոր  
յերիտասարդության համար դպրոցներ,  
գրադարաններ և ակումբներ չկան,  
ուր յերիտասարդությունը կարողանար  
սովորել, ժամանակ անգետնելու հան-

գլուխանալ, կապիտալիստական յերկրը-  
ներում համալսարանները միայն հա-  
րուստների համար են, իսկ գրքերն  
ել այնքան թանգ արժեն, վոր բան-  
վորի գրպանի բանը չեն։ Հարուստներն  
սպորտի և խաղերի հրապարակներ  
ել ունեն։ Նրանք հայտարարում են,  
վոր չքավորներին այդ հարկավոր չե,  
վորովհետև, յեթե նրանք սպորտով  
զբաղվեն, նրանց հանգստի ժամանակ  
չի մնա։ Այս տարբերության պատճա-  
ռըն այն ե, վոր Խ. Ս. Հ. Մ. իշխա-  
նությունը վոչ թե շահագործողների,  
այլ բանվորների և գյուղացիների ձեռ-  
քում եւ։

Ուրիշ յերկրներում յերիտասարդու-  
թյունը վոչ միայն տնտեսապես ե շահա-  
գործվում, այլ և բոլոր քաղաքական  
իրավունքներից զուրկ ե, Ընտրություն-  
ներին մասնակցելու իրավունք չունի  
նա. հաճախ իրավունք չունի քաղաքա-  
կան ժողովներ այց ելել և քաղաքական  
կազմակերպությունների մեջ մտնել։

Այս բոլոր անարդարությունների  
դեմ և պրոլետարական ու գյուղական  
յերիտասարդության բոլոր ահոելի շա-  
հագործման դեմ կոմյերիտմիությունը  
յեռանդուն պայքար ե մզում։ Սակայն  
պարզ ե, վոր քանի դեռ իշխանու-  
թյունը կապիտալիստների ձեռքումն ե,  
չնայած բոլոր ջանքերին՝ պահանջնե-  
րի միայն մի մասը կարելի կլինի  
անցկացնել, վորովհետև այդ պահանջ-  
ների բավարարութը կնշանակեր, վոր  
կալվածատերերը հրաժարվում են իրենց  
այն հեշտ ոգուտից, վորն աշխատա-  
վորների հաշվով են ձեռք բերում։  
Զարիքի արմատը բուն կառուցվածքի  
մեջ ե, վորը կալվածատիրոջ ձեռքն իշ-  
խանություն ե տալիս։ Ուստի պետք  
ե պայքար մզել. վորպեսզի կալվածա-  
տերերն ու կապիտալիստները վերջ-  
նականապես վոնդվեն, և իշխանու-  
թյունն աշխատավորությունը նվաճի։  
Կոմյերիտմիությունը կոչ ե անում  
յերիտասարդ բանվորներին ու բանվո-

բուհներին պայքար մզել, վոր բոլոր  
յերկրներում այնպիսի պրոլետարական  
հեղափոխություն կատարեն, ինչպես  
և Ա. Հ. Մ.։

Քաղաքի և գյուղի բոլոր ձնշվածները  
միայն այսպիսով են հասնելու իրենց  
կատարյալ աղատագրմանը։

Ուստի ինչպես քաղաքի յերիտա-  
սարդ պրոլետարներին, այնպես ել  
գյուղական աշխատավոր յերիտասար-  
դությունը կոմյերիտմիությունը պատ-  
րաստում ե արի կոիմների հանուն  
համաշխարհային հեղափոխության։

ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ՅԵՐԻՏԱՍԱՐԴՈՒ-  
ԹՅԱՆ ԹՇՆԱՄԻՆԵՐԸ.

Մինչդեռ ամեն տեղ քաղաքի և գյու-  
ղի պրոլետարները ձգտում են միանալ,  
վորպեսզի իրենց տանջողներին տա-  
պալեն, կապիտալիստներն ամեն տե-  
սակ միջոցներ են վորոնում, վորպես-  
զի քաղաքի և գյուղի պրոլետարների  
միացումը խանգարեն և ընդհանրապես  
պրոլետարիատին պայքարից հեռու պա-  
հեն: Նրանք չեն ցանկանում, վոր պրո-  
լետարիատը ռազմունակ մեծ և ուժեղ  
կազմակերպություններ ստեղծի, վո-  
րոնք նրան հաղթանակի յեն հասցնե-  
լու: Ուստի նրանք ոգտագործում են զա-  
նազան միջոցներ՝ ուժ և, ամենից առաջ,  
սուտ ու խորամանկություն, վորպես-  
զի պրոլետարիատի ուղեղը մթագնեն:  
Տանջողներն իրենց կողմից մի շարք  
կազմակերպություններ են ստեղծում,

վորոնց մեջ նրանք փորձում են քա-  
շել քաղաքի և գյուղի բանվորներին:  
Նրանք բանվորներին ասում են, վոր  
այդ կազմակերպությունները նրանց  
բարորության համար են ստեղծված.  
Բայց իսկապես նրանք աշխատում են  
բանվորներին ճիշտ ճանապարհից շե-  
ղել: Միայն Խ. Ս. Հ. Մ. է, վոր նման  
կազմակերպություններ գոյություն  
չունեն, վորովհետև պրոլետարական իշ-  
խանությունը թույլ չի տալիս, վոր  
ժողովրդին այդպես հիմարացնեն:

ՏԵՐՏԵՐԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.

Կապիտալիստական յերկրներում  
գյուղացիական յերիտասարդության  
վրա, ամենից առաջ, կրօնական ընկե-  
րությունները մեծ ազգեցություն ու-  
նեն: Դյուղական յերիտասարդությունն  
արհմիությունների մեջ ե քաշվում  
գլխավորապես տերտերների ու նման  
«հավատացյալ» անձնավորություննե-  
րի կողմից, վորոնք յերիտասարդու-

թյանը շարունակ քարոզում են, վոր  
նա աշխատասեր ու հնագանդ լինի,  
աստվածաշնչից բացի ուրիշ գրքեր չը-  
կարդա և անի այն, ինչ վոր կառավա-  
րությունն ու կալվածատերերն են ցան-  
կանում:

Պարզ ե, այս միությունները վոչ  
թե կրոնի համար են, այլ նրա համար,  
վոր յերիտասարդության շահագործու-  
մը հեշտացնեն: Այս միությունները  
քարոզում են «սեր գեպի մերձավորը»,  
սակայն չեն բողոքում այն բանի դեմ,  
վոր մինչդեռ աշխատասեր բանվորնե-  
րը հաճախ քաղցից մեռնում են, կալ-  
վածատերերն անդադար քեփեր են  
սարքում ու ճարպակալում:

Այնուամենայնիվ այս միություննե-  
րը գյուղում դեռ շատ մեծ աղդեցու-  
թյուն ունեն: Այս բացատրվում ե  
նրանով, վոր կալվածատերերը, դպրոցը,  
յեկեղեցին ստիպում են յերիտասարդ  
տղաներին ու աղջիկներին մտնել այդ  
կազմակերպությունների մեջ ու հա-

ճախ սպառնում են նրանց պատժել,  
յեթե նրանք այդ չանեն:

Զանազան յերկրներում այս ընկե-  
րությունների մեջ միլիոնավոր յերի-  
տասարդ պրոլետարներ կան: Այսպես,  
միքանի յերկրներում կաթոլիկական  
յերիտասարդական միությունների մեջ  
հետեւյալ թվով անդամներ կան.

Գերմանիա . . . 1.379.492

Բելգիա . . . 451.527

Իտալիա . . . 515.535

Ֆրանսիա . . . 179.800

Գյուղացիական նման միություններ կազմակերպված են նույնիսկ գաղութներում «հեթանոսների» մեջ: Այսպես, որինակ՝ Զին ստանում, ուր անդիացիներն ու յապոնացիներն սպառնում են չինացիներին, մարդասպանների վարձկան քարոզիչները յերիտասարդությանը համոզում են, թե ամենինչ «կամոքն աստուծո» յելինում, թե նրանք մարդասպաններից շնորհակալ պիտի լինեն, վորովհետեւ նրանք չինա-

ցիներին լուսավորում են ու նրանց  
կյանքի պայմանները լավացնում:

Այս որինակներից յերեսում ե, վոր  
այս միություններն աշխատավոր յե-  
րիտասարդությունը խարում են և իրոք  
նրա թշնամիներն են:

Այս միություններն ամենից շուտ,  
իհարկե, կոմյերիտմիությունն են ա-  
տում, վորովհետև նա կովում ե շա-  
հագործողների դեմ ու մերկացնում  
կաթոլիկական միության սուտ խոս-  
տումները: Յերբ կալվածատերը յերի-  
տասարդ բանվորին ծեծում ե, այս  
միությունների բարեպաշտ դեկավար-  
ները միշտ քարոզում են՝ «սիրեցեք  
ձեր թշնամիներին» ու միաժամանակ  
հաճախ հրամայում են իրենց անդամ-  
ներին կոմյերիտականներին թակել:

Կոմյերիտմիությունն ամեն ինչ ա-  
նում ե, վոր գյուղացիական յերիտա-  
սարդությունն իր թշնամիների յետերց  
չգնա, ջանում ե նրանց ազդեցությու-  
նից ազատել ու կոմյերիտմիության  
մեջ քաշել:

ԴԱՎԱՃԱՆԱԿԱՆ ՊԱՏՍՈՒԵԿԱՆ ԲԱՆՎՈ-  
ՐԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.

Նույնպիսի վտանգավոր թշնամիներ  
ել յերիտասարդական այն միություններն են, վորոնք իրենց անվանում են պրոլետարական և աշխատում են պրո-  
լետարիատին ապացուցել, վոր իրենք  
ել են կովում շահագործողների դեմ.  
այսպես կոչված «սոցիալիստական»  
յերիտասարդական բանվորական միությունները հենց այսպիսին են: Այս  
միությունները դեկավարում են հենց  
նույն առաջնորդները, վորոնք պատերազմի սկզբին պրոլետարիատին դա-  
վաճանեցին:

Նրանք փորձում են յերիտասարդ  
բանվորներին քաշել գեպի պարի յերե-  
կոներ, եքսկուրսիաներ և այլն կազմա-  
կերպելը, սակայն պայքարի մասին չեն  
ուզում վոչինչ լսել: Յերիտասարդության կյանքը բարելավելու համար նրանք  
թեև վորոշ պահանջներ նույնիսկ առա-  
ջազրել ել են, բայց այս պահանջներն

իրականացնելու համար վոչ մի միջոց  
ձեռք չեն առնում: Նրանք սահմանա-  
փակվում են միայն նրանով, վոր պար-  
լամենտում այս պահանջները պաշտպա-  
նում են և առաջարկում են որենսդրա-  
կան կարգով կիրառել: Բայց վորովհե-  
տև պարլամենտում հենց նույնպիսի դա-  
վաճաններ են նստում, և, բացի այդ,  
բոլոր կապիտալիստներն այդ պահանջ-  
ներին դեմ են դուրս գալիս, այդ պատ-  
ճառով դրանից յերբեք բան դուրս  
չի գալիս: Յերիտասարդությանը պայ-  
քարի կոչ անել և այդ պայքարը դե-  
կավարել—այս միակ ուղիղ ճանապար-  
հով նրանք չեն գնում, վորովհետև  
նրանք չեն ցանկանում այդ պահանջները  
լրջորեն իրագործել:

Հաճախ, յերբ այս միություններն  
աշխատավոր յերիտասարդության հա-  
մար վորեւ պահանջ են առաջադրել,  
կոմյերիտականները հայտարարել են,  
վոր իրենք ել են ցանկանում նրանց  
հետ միասին պաշտպանել այդ պահանջը:

Բայց այս միություններն այդ բանին  
յերբեք չեն համաձայնվել: Նրանք շա-  
րունակ միայն աղմուկ են բարձրացրել,  
թե բոլոր կոմմունիստները վոճրագործ-  
ներ են ու պիտի բանտ նետվեն: Այս  
ցույց ե տալիս, թե ինչ աստիճան  
նրանք լուրջ են վերաբերվում պայքա-  
րին:

Այս մարդիկ խորհրդային իշխանու-  
թյունն ել են հայհոյում: Նրանք պըն-  
դում են, վոր յերիտասարդությունը  
Խ. Ս. Հ. Մ. մեջ ավելի շատ ե աշխա-  
տում, քան կապիտալիստական յերկըր-  
ներում, և վոր շատերն այնտեղ քաղ-  
ցած են: Նրանք շատ լավ զիտեն, վոր  
այս բոլորը սուտ ե, բայց նրանք այդ  
ամենը նրա համար են ասում, վոր պըո-  
լետարիատը Խ. Ս. Հ. Մ. մասին վատ  
գաղափար ունենա, վոր ինքն ել հեղա-  
փոխություն չանի:

Նրանք հաճախ միանում են բանվոր  
դասակարգի թշնամի ֆաշիստների հետ:  
Այսպես՝ Գերմանիայում այսպես կոչված

յերիտասարդական բանվորական «սոցի-  
ալիստական» միությունները ֆաշիստ-  
ների հետ հանդես յեկան հոգուտ այն  
բանի, վոր յերիտասարդությունը կա-  
ռավարության համար մի ամբողջ տա-  
րի ձրի աշխատի։ Սակայն այստեղ  
միայն կապիտալիստները կշահեյին։ Բա-  
ցի այդ, յերիտասարդ բանվորները զին-  
վորական կրթություն պիտի ստանային,  
վորպեսզի հետագայում կարելի լիներ  
Խորհ. Միության դեմ պայքար սկսել։

Այս բոլոր միությունները մտնում  
են այսպես կոչված «Բանվոր Յերիտա-  
սարդության Սոցիալիստական Ինտեր-  
նացիոնալի» մեջ, վոր գլխավորապես  
Ռուսական հեղափոխությունն անի-  
ծելով և Խ. Ս. Հ. Մ. դեմ պատերազմի  
կոչ անելով ե զբաղվում։

ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ԴԵՄ ԲԱՑԱՐՁԱԿ ՀԱՆ-  
ԴԵՍ ՅԵԿՈՂ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.

Պըոլետարիատի բացարձակ թշնամի-  
ները՝ ֆաշիստներն ու ռեակցիոն միու-

թյուններն են, վորոնք բոլոր միջոց-  
ներով փորձում են նրա դեմ՝ կովել։ Նրանք  
ել են ձգտում բարատկներին և գյուղա-  
ցիական յերիտասարդությունն իրենց  
միությունների մեջ քաշել, հայտարա-  
րելով, վոր բոլոր դժբախտությունների  
մեջ ծույլերը՝ քաղաքի բանվորներն ու  
ամենից առաջ կոմմունիստներն են  
հանցավոր։

Նրանք աշխատում են քաղաքի և  
գյուղի միջև հակասություններ ստեղ-  
ծել ու գյուղացիներին պրոլետարիա-  
տի հետ կովեցնել։ Ի հարկե, այս նրանց  
չի խանգարում բատրակների գեմ դուրս  
գալ այնտեղ, ուր վերջինների գոր-  
ծադրուններն են տեղի ունենում։

Ֆաշիստներն ու ռեակցիոններները  
մարտական մեծ միություններ ունեն,  
ուր յերիտասարդությունը բանվորների  
և ամենից առաջ Խ. Ս. Հ. Մ դեմ կովելու  
համար ե դաստիարակվում։ Այս միու-  
թյունները հենց այժմ ել հարյուր հա-  
զարներով անդամներ ունեն։ Նրանք

ուժեղ են մանավանդ իտալիայում և  
Սպանիայում, ուր իշխանությունը  
նրանց ձեռքումն է, և ուր շատ բան-  
վորների ու գյուղացիների նրանք սպա-  
նել և այժմ ել սպանում են:

Սակայն Փաշիստները Գերմանիայում  
ել ուժեղ են: Մեակցիոն կազմակերպու-  
թյունների ու կոմմունիստների միջև  
շատ հաճախ կոփիֆներ ու հրացանաձգու-  
թյուններ են տեղի ունենում: Բերլի-  
նում ու եակցիոններները ճենց նորերս մի  
սանիտար են սպանել, վորը կամեցել  
եր մի բանվորի վերքերը կապել:

Նման միություններ միավետական-  
ներն ել ունեն, վորոնք աշխատում են  
Գերմանիայում կայսերական իշխանու-  
թյունը վերականգնել. նույնիսկ «դե-  
մոկրատներն» ել իրենց մարտական բա-  
նակներն ունեն: Ճիշտ ե, նրանք հայ-  
տարարում են, վոր այդ բանվորները  
ու եակցիոններների դեմ պետք ե կռվեն:  
Բայց իրականում նրանք զլխավորապես  
պըոլետարիատի դեմ են կռվում: Այս

կաղմակերպության մեջ գտնված բան-  
վորներից շատերն այս բանը հասկացել  
են արդեն: Այժմ նրանք իրենց յեղբայր-  
ների դեմ դուրս գալուց հրաժարվում  
են և շատ տեղերում հեղափոխական  
բանվորների ու գյուղացիների հետ յեղ-  
բայրանում են:

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԱՐԴԱՍՊԱՆ-  
ՆԵՐԻՆ ՊԱՇՏՊԱՆՈՒՄ են.

Ամենուրեք, ուր նման ու եակցիոն  
միությունները բանվորների դեմ պայ-  
քար են մղում, կապիտալիստական կա-  
ռավարություններն ու, ի՞արկե, նրանց  
վոստիկանությունը, այս պայքարի մեջ  
հիշյալ միություններին պաշտպանու-  
թյուն են ցույց տալիս: Վոստիկանությու-  
նըն ու ու եակցիոններները հաճախ միասին  
կռվում են ճնշվածների դեմ և ապա սպի-  
տակ տեղը ու են կատարում: Այդ ե տե-  
ղի ունենում այժմ Բոլգարիայում, ուր  
հարյուրավոր բանվորներ ու գյուղա-  
ցիներ են սպանված, նույն ել տեղի

յե ունենում Խ. Ս. Հ. Մ սահմանակից  
պետություններում՝ Ֆինլանդիայում,  
Լատվիայում, Լեհաստանում, Ռուսի-  
նիայում, Ճնշողները վախենում են, վոր  
Խ. Ս. Հ. Մ. որինակն իր հարեան այս  
յերկրների բանվորների մեջ ել կորթ-  
նացնի ազատ կյանքին հասնելու ձըգ-  
տումը: Հենց զրա համար ել նրանց  
առանձնապես ճնշում են: Սակայն  
պարզ ե, վոր այսպիսով նըանք ուժե-  
ղացնում են բանվորների ազատազրա-  
կան ձգտումը:

Այսթշնամիների գեմ կոմյերիտմիու-  
թյունն անողոք կոիվ ե մղում: Նա  
փորձում ե դեռ այդ միությունների  
մեջ մտնող գյուղացիներին ու բանվոր-  
ներին բացատրել, վոր նրանք սխալ  
ճանապարհի վրա յեն կանգնած և աշ-  
խատում ե վողջ պըոլետարիատի պայ-  
քարին նրանց մասնակից դարձնել:

ԿԻՄ.Ի ՀԱԿԱՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ  
ՊԱՅՔԱՐԸ.

Համաշխարհային պատերազմի ու  
Միջազգային Յերիտասարդության I  
Որվա մասին խոսելիս մենք մատնա-  
նշեցինք, վոր յերիտասարդությունը  
միշտ հատկապես կարեոր խնդիր ե հա-  
մարում բուրժուական միլիտարիզմի  
դեմ պայքարելը:

Հենց այժմ ել այս պայքարը շատ  
մեծ նշանակություն ունի, վորովհետեւ  
ամբողջ աշխարհի կապիտալիստները  
դարձյալ համաշխարհային նոր պատե-  
րազմի պատրաստություններ են տես-  
նում, վորն ել ավելի արյունահեղ կի-  
նի, քան 1914—1918 թ. պատերազմը:  
Աշխարհիս ամենախոշոր, ամենաուժեղ  
պետությունները՝ Անգլիան, Ամերիկան,  
Ֆրանսիան, Յապոնիան և Իտալիան  
շարունակում են ճնշել արևելյան ու  
գաղութային ժողովուրդներին և հենց

դրա համար ել նրանց գեմ պատերազմում են:

Այսպես, որինակ՝ ֆանսիան այժմ Մարոկկոյում (Հյուսիս. Աֆրիկա) ոլքերի ցեղի դեմ պատերազմում ե, վորովհետև ֆրանսիացիք կամենում են այդ յերկրի նավթի հանքերը տիրապետելու ու նրա ժողովրդին շահագործել:

Կոմմունիստները կարծում են, վորամեն մի ժողովուրդ իր յերկրում խաղաղ կյանքով ապրելու իրավունք ունի, վոչվոք իրավունք չունի ուրիշին ձնշելու, բոլոր ժողովուրդները համերաշխպիտի ապրեն:

Ուստի ֆրանսիական կոմմունիստներն ու կոմյերիտականները ֆրանսիական վառավարության սկսած այս պատերազմի դեմ պայքար են մղում: Պատերազմի դեմ նրանք ցույցեր են սարքում ու զինվորներին կոչ անում, վորպեսզի ոլքերի վրա գնդակ չարձակեն, այլ նրանց հետ յեղբայրանան: Այս կոմմունիստները, վորոնք ստիպված են ճակատ գնալ, իրենց ընկեր-

ների մեջ ազիտացիա յեն անում, վոր չկրակեն ոլքերի վրա, վորոնք իրենց կյանքի և ազատության համար են պայքարում: Ճակատի միքանի տեղերում արդեն յեղբայրացում ե կատարվել, և կրակելու փոխարեն զինվորները միասին համայն աշխարհի տանջվածների ազատության յերգը — ինտերնացիոնալն ելին յերգում:

Նույնպես ել Զինաստանի ժողովուրդն ե իր ազատության համար պայքարում և ձգտում իրեն տանջող անգլիացիներին, ամերիկացիներին, յապոնացիներին և իտալացիներին դուրս վոնդել, վորպեսզի վերջապես իր սեփական յերկը կը տերը դառնա: Այս պայքարում կոմմունիստները չինացիների կողմն են, և դեռ միքանի ամիս առաջ Կի՛Մ-ը գրել ե.

«Զինաստան ուղարկվող նավերի վրա մենք պրոպագանդայի աշխատանքներ ելինք կատարում: Ֆրանսիացի և անգլիացի մեր ընկերները կոչերի ու թերթիկների միջոցով դիմում

Եյին նավաստիներին՝ կոչ անելով Զի-  
նաստանի բանվորների և գյուղացինե-  
րի հետ յեղբայրանալու»:

Կոմմունիստական յերիտասարդական  
միություններին այս պայքարը շատ  
թանգ նստեց։ Հակամիլիտարիստական  
պրոպագանդի համար ընկերներից շա-  
տերը ձերբակալվեցին։

Փրանսիայի և Գերմանիայի կոմմու-  
նիստական միությունները Ռուրի շըր-  
ջանում (գերմանական շրջան, վոր  
գրավել են Փրանսիական գեներալները,  
վորպեսզի տիրապետեն հանքերը) հե-  
րոսական աշխատանք են կատարել։  
Զրույցների ու թերթիկների միջոցով  
կոմմունիստները զինվորներին բացա-  
տրում եյին, վոր նրանք նույնպես  
բանվորներ են, վոր հայրենիքում  
նրանց ընտանիքները նույնպես վատ են  
ապրում, ինչպես այստեղի բանվորները,  
վոր հենց դրա համար ել նրանք բան-  
վորների վրա չպիտի կրակեն, այլ  
իրենց գեներալաների դեմ պիտի կռվեն։

Այս աշխատանքի համար դեռ մինչև  
այժմ ել շատ ընկերներ բանտերում  
նստած են։ Շատերը 5-6 տարով բան-  
տարգելության են դատապարտված։

Գերմանական յերիտասարդական  
թերթը միմիայն մի շաբաթվա կալա-  
նավորների մասին գրում ե։ —

ԿԱԼԱՆԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒ ՀԱԼԱ-  
ԾԱՆՔՆԵՐ.

Ռեկլինհառենում, Հռենոսի շրջա-  
նում, հակամիլիտարիստական պրոպա-  
գանդի համար գրեթե մեր ամբողջ կազ-  
մակերպությունը կալանավորված ե։

Հռենոսի շրջանում մեր ընկերներից  
այժմ մոտ 150 հոգի բանտարկված են,  
վորոնց հետ շատ դաժան կերպով են  
վարվել։ Պոմերանիայի շրջանում բան-  
տարկված են 17 ընկերներ։ Նրանք  
բոլորն ել պետական դավաճանության  
ու դավադրություն կազմակերպելու  
մեջ են մեղադրվում։ Նրանցից մեկին—  
16 տարեկան Յելիզավետա Մեյնկե-  
յին պոռնիկի հետ մի կամերայում են

Նստեցրել։ Ահավասիկ դերմանական  
կառավարության դաստիարակչական  
մեթոդները։

Դուիսբուրգում, Զոլինգենում, Բու-  
նում, Տրիերում, Քյոնցում և Կոբլենցում  
հակամիլիտարիստական պրոպագանդի  
համար մի շարք ընկերներ նույնպես  
բանտարկված են։

Կապիտալիստական կառավարու-  
թյունների միայն ուազմական նպա-  
տակների դեմ չե, վոր կոմմունիստնե-  
րը պայքարում են. նրանք նույնպես  
փորձում են զինվորներին պլութա-  
րիատի կողմը քաշել։ Այս անհրաժեշտ  
ե, վորովհետև կապիտալիստական կա-  
ռավարություններն իրենց բանակներն  
ամենից շատ իրենց բուն յերկրի բան-  
վոր դասակարգի դեմ կովելու համար  
են ոգտագործում։ Գործադուլների ժա-  
մանակ բուրժուազիան բանվորներին  
հաճախ զինվորներով ե փոխարինում,  
կամ վերջիններին ստիպում ե, վոր բան-  
վորների վրա կըակեն։ Յերբ բանվոր-

ներն ապատամբում են ուեակցիոն կա-  
ռավարությունների դեմ, բուրժուա-  
զիան զինվորների ոգնությամբ կռվում  
ե նրանց դեմ։ Այս պատճառով արդեն  
շատ հեղափոխությունների մեջ բան-  
վորները պարտություն են կրել։

Զորակոչի յենթարկված կոմմունիստ-  
ները զինվորների մեջ աշխատանք տա-  
նելու համար իրենց վաշտում կամ  
զնդում գաղտնի բջիջներ են կազմում։  
Նրանք կոմմունիստական կազմակեր-  
պությունից լրագրեր ու թերթիկներ  
են ստանում՝ զինվորների մեջ տարա-  
ծելու համար, վորպեսզի վերջիններիս  
ապացուցեն, վոր բուրժուազիան նրանց  
ստիպում ե յեղբայրասպան գառնալ։  
Յերբեմն հաջողվում ե այնպես անել, վոր  
զինվորները բանվորների վրա չեն կրա-  
կում, այլ զենքն սպաների—պըոլետա-  
րիատի թշնամինների դեմ են ուղղում։  
Զինվորների լԱՎԱԳՈՒՅՑՆ ԿՅԱՆՔԻ  
ՀԱՄԱՐ.

Կոմյերիտմիությունը զինվորների  
կյանքի պայմանները բարփոքելու հա-  
մար ել ե պայքարում։ Զինվորների  
աշխատավարձը բարձրացնելու, զինվո-  
րական ծառայության ժամկետը կրծա-

տելու համար և այլն, նա պահանջներ ե  
առաջադրում։ Հենց դրա համար ել ավե-  
լի ևս մեծ չափով ե նրան հաջողվում  
զինվորների համակրանքը նվաճել։

Զինվորների մեջ հատկապես շատ  
գյուղացիներ կան։ Կոմմունիստները  
պաշտպանում են այն, վոր հնձի ժա-  
մանակ զինվորներին արձակուրդ տըր-  
վի, պայքարում են սպաների կոպիտ  
վերաբերմունքի դեմ, վորոնք յերիտա-  
սարդ զինվորին հաճախ ծեծում ու  
տանջում են, այնպես վոր վերջինները  
հուսահատությունից յերբեմն ինքնա-  
սպանություն են գործում։

ԻՆՉՈՐԻ ՅԵՐԻՏԱՍԱՐԴ ԲԱՆՎՈՐՆԵՐԸ  
ԿՐԱԿԵԼ ՊԵՏՔ Ե ՍՈՎՈՐԵՆ.

— Վոմանք պնդում են, վոր պատերազ-  
մի ու ռեակցիոն բանակների դեմ  
պայքարելու համար պետք ե միայն  
հրաժարվել զինվորական ծառայությու-  
նից ու մարդկանց վրա կրակելուց։  
Այդ շատ լավ ե հնչում, բայց իրակա-  
նում սխալ ե։ Անհատների նման վար-  
մունքը վոչնչի չի հանդի, վորովհետև  
զենքը ռեակցիոներների ձեռքում կմնար  
ու հետեանքը կլիներ այն, վոր բոլոր

խաղաղ մարդիկ առանց դիմադրության  
կսպանվելին։

Քանի դեռ ձնշողները գրյություն  
ունեն, նրանք պետք ե փորձեն բոլոր  
նոր ժողովուրդներին, ամենից առաջ  
իրենց յերկրի պրոլետարիատին ստըր-  
կացնել։ Իրավացի յե լենինը, վոր ա-  
սել ե, թե պատերազմները միայն այն  
ժամանակ կվերջանան, յերբ պրոլետա-  
րական հեղափոխությունը հաղթանակի։  
Ապա նա ասել ե, վոր ամեն մի յերի-  
տասարդ պրոլետար զենք բանեցնել  
պետք ե սովորի, վորպեսզի պրոլե-  
տարիատի թշնամիների դեմ կովել կա-  
րողանա։ Ուեակցիոն կառավարությու-  
նը քաղաքի և գյուղի յերիտասարդ  
աշխատավորներին զինվորության ե  
տանում ու նրանց զենք բանեցնել ե  
սովորեցնում։ Իսկ այնուհետև զինվորնե-  
րը զենքը վոչ թե իրենց յեղբայրների,  
այլ արդեն կառավարության ու բոլոր  
շահագործողների դեմ պետք ե դարձնեն։  
ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԸ.

Այդ պատճառով կարեոր ե, վոր պրո-  
լետարական Խ. Ս. Հ. Մ. բանվորա-  
գյուղացիական կուռ բանակ ունի, վո-  
րովհետև բոլոր յերկրների կապիտալիստ-

ներն առաջվա պես փորձում են Խոր-  
հըրդային Միությանը հաղթել, փորպես-  
զի հնարավորություն ունենան առաջ-  
վա պես նրան շահագործել. Հենց այժմ  
Խ. Ս. Հ. Մ. ելի չորս կողմից պատե-  
րազմով սպառնում են: Բուրժուազի-  
ան չի կարող հաշտվել այն բանի հետ,  
վոր Խ. Ս. Հ. Մ. համայն աշխարհի ճընշ-  
վածներին ոգնում ու նրանց որինակ  
ե ցույց տալիս, թե ինչպես պետք ե  
աղատագրվել շահագործումից:

Կարմիր բանակը մյուս բանակների  
հետ չի կարելի համեմատել նաև այն  
պատճառով, վոր Կարմիր բանակում զին-  
վորներին զրել կարդալ են սովորեցնում  
ու զորանոցներում նրանց դրությունն  
անհամեմատ լավ ե, քան ուրիշ յեր-  
կըրներում. նրանք գյուղ են վերագու-  
նում ավելի զիտակից, քան առաջ ելին,  
Բացի այդ՝ նրանք վոչ թե ուրիշ յեր-  
կըրների վրա հարձակվելու, այլ իրենց  
աղատությունը պաշտպանելու համար  
են միայն Կարմիր բանակում մնում:

Այս պատճառով համայն աշխարհի  
պլուետարիատը Կարմիր բանակի վրա  
նայում ե իբրև իր լավագույն բարեկամի:  
Այժմ արդեն հեղափոխական գյու-

դացիներն ու բանվորները կապիտալիստ.  
յերկըրներում մարտական բան ակ-  
ներ են կազմակերպում, վորոնք ապա-  
գա Կարմիր բանակի սկիզբն են հանդի-  
սանում: Այս բանակներն ել այնպես, ինչ-  
պես և ամբողջ պլուետարիատը, Կար-  
միր բանակին միշտ պաշտպանելու յեն,  
յերբ նա պաշտպանելու լինի Խորհրդա-  
յին Միությունն ու պլուետարական  
հեղափոխությունը: Նրանք պետք ե  
ձգտեն նաև, վոր իրենց յերկըրում ել  
հեղափոխությունն իրականացնեն: Այս  
պայքարում յերիտասարդ գյուղացիները  
պլուետարիատին անվեհերությամբ կը-  
պաշտպանեն: Դեպի այդ ե կոչում  
Յերիտասարդության Կոմմունիստական  
ինտերնացիոնալը բոլոր արևմտյան և  
արևելյան, այժմ գեռ կապիտալիստա-  
կան յերկըրների գյուղացիական վողջ  
յերիտասարդությունը: Մենք հաստատ  
համոզված ենք, վոր գյուղացիական  
յերիտասարդության մեծ մասն այս որի-  
նակին խանդավառությամբ կհետեի:

Ի՞նչ եր ՍՈՎՈՐԵՑՆՈՒՄ ՅԵՐԻՏԱՍԱՐ-  
ԴՈՒԹՅԱՆԸ ԼԵՆԻՆԸ.

Կապիտալիստական յերկրների մար-  
տական պրոլետարիատի, ինչպես և Խ. Ս.  
Հ. Մ. յերիտասարդության համար, լե-  
նինը լավագույն որինակ է, և ամենու-  
րեք յերիտասարդ բանվորները ձգտում  
են նրա ուսմունքը հասկանալ ու նրան  
հետեւ: Քաղաքի և գյուղի պրոլետա-  
րական յերիտասարդության մասին լե-  
նինն ասել ե.

« . . . Նա (յերիտասարդությունը)  
միայն այն ժամանակ կոմմունիզմ կսո-  
վորի, յեթե իր դաստիարակության ու  
կրթության ամեն մի քայլը կապի  
շահագործող հին հասարակության դեմ  
պրոլետարիատի ու բոլոր աշխատավոր-  
ների անընդհատ մղվող պայքարին:»

Վոր յերիտասարդությունն արեմը-  
տյան յերկրներում ել պայքարել գիտե,

այդ նա արդեն ապացուցել եւ նա իր  
բոլոր ուժերը պիտի լարի, վորպեսզի  
լենինի մեծ ուսմունքը հասկանա, թե  
պրոլետարիատի ազատագրման պայքա-  
րի լավագույն ձեռ վորն ե, վորովհետեւ  
այս ուսմունքը հիմնովին տարբերվում  
է կապիտալիստական դպրոցներում ա-  
վանդվող ուսմունքից, ուր բոլոր գիտե-  
լիքները պրոլետարիատին ել ավելի շա-  
հագործելուն են ծառայում: Յերիտա-  
սարդությունը պետք է գիտենա, վոր  
լենինի ուսմունքին հետևելով միայն  
նա կսովորի, թե ինչպես պետք է ինքն  
իրեն ազատագրի: Ուստի նա պետք է  
հետեւ լենինի կոմմունիստական յերի-  
տասարդության թողած ավանդներին:

«... Լինել յերիտասարդության կոմ-  
մունիստական միության անդամ—նշա-  
նակում ե բոլոր ուժերն ու գիտելիք-  
ներն ընդհանուր գործի ծառայությանը  
նվիրել: Այս ե կոմմունիստական դաստի-  
արակությունը: Այսպիսի աշխատանքն  
ե յերիտասարդ տղամարդուն կամ յե-

րիտասարդ աղջկանն իսկական կոմմունիստ դարձնում»:

Լենինի ուսմունքի ամենաեյական մասն այն ե, վոր նա պրոլետարիատին վոչ միայն սովորեցնում ե, թե ինչպես պետք ե ազատագրական պայքար մղել, այլ և այն, վոր նա պրոլետարիատին գաշնակիցներ ունենալու անհրաժեշտությունն եր ցույց տալիս, ամենից առաջ, հանձինս գյուղացիության ու գյուղական յերիտասարդության, վորոնք կապիտալից նույնպես տառապում են, ինչպես քաղաքի պրոլետարիատը։ Դաղութային ժողովուրդները, վորոնք մեծ մասամբ գյուղացիներն են, այս պայքարին նույնպես մասնակից պիտի լինեն։ Գյուղացիական յերիտասարդությունը պիտի հասկանա, վոր կոմյերիտմիությունն ե միայն այն կազմակերպությունը, վորը գյուղացիական աշխատավոր յերիտասարդության վիճակի մասին հոգ ե տանում ու կալվածատերերի և կուլակ-

ների գեմ մղվող նրանց պայքարը պաշտպանում։

Կոմյերիտմիությունը գյուղական պրոլետարների մեջ լենինի ուսմունքն ե տարածում, վորը նույնպես այն ե ասում, թե պրոլետարիատն ու գյուղացիությունը միայն այն ժամանակ վերջնական ազատազրման կհանեն, յերբ բոլոր շահագործողներին տապալեն և իշխանությունն իրենց ձեռքն առնեն, ինչպես Խ. Ս. Հ. Մ. պրոլետարիատն արեց, վորն այնուհետև կալվածատերերի հողը գյուղացիներին տվեց։

Իշխանությունը ձեռք բերելու այս պայքարում, վորը, բացի Խ. Ս. Հ. Մ.-ից, ամբողջ Արևմտյան Յեվրոպայում, Ամերիկայում և Ասիայում, մի խոսքով՝ ամբողջ աշխարհում հերթական ինդիր ե, — յերիտասարդությունը շատ մեծ գեր ե խաղալու։ Առաջին հերթին նա մարտական հզոր բանակներ ե կազմակերպելու թշնամիների գեմ պայքարելու համար։ Նա կառուցելու յե կոմ-

մունիստական նոր հասարակություն,  
ուր շահագործողներ ու շահագործվող-  
ներ չեն լինի:

Կապիտալիստական յերկրներում շա-  
հագործողները գեռ շատ ուժեղ են,  
ավելի ուժեղ, քան մի ժամանակ Ռու-  
սաստանում: Բոլոր թշնամիներին ու դա-  
վաճաններին վերջնականապես հաղթա-  
նակելու համար կոմյերիտմիությունն  
ավելի քան համառ պայքար պիտի մղի,  
գյուղացիական յերիտասարդությունը  
մասնակից դարձնելով այդ պայքարին:

Բոլոր յերկրների յերիտասարդության  
կոմմունիստական միությունների ու  
ԿԻՄ-ի նպատակն այն է, զորպեսզի  
կապիտալիստական յերկրներում վոչ  
միայն քաղաքի, այլ և գյուղի յերի-  
տասարդությունը լենինյան վոգով դաս-  
տիարակի: Բոլոր յերկրներում գյուղա-  
ցիական յերիտասարդության մեջ մենք  
արդեն շատ քաջարի մարտիկներ ունենք,  
վորոնք պատրաստ են լենինի գրոշի  
տակ պայքարելու և քաղաքի պրոլե-  
տարիատի հետ ավարտելու լիշի գործը՝  
պրոլետարական հեղափոխության հաղ-  
թանակն ամբողջ աշխարհում:

ՀՀ Ազգային գրադարան



NL0766443

2353



ԳԻՆԸ 25 ԿՈՊ.